

ՄՇԽԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի, Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միսիային խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисе. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն):

Հայտարարութիւն ընդունուում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Հէլմօլց, Հոսի պապի շրջաբերականը.— Դեմ-
քին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գաղտնաբերական թէթօրօմե-
րի հարցը. Երբ պէտք է ներող միտ լինել. Յով-
հաննէս Խաթիսեանի թարգմանը Դամակ Ալեքսանդր-
օպօլից. Դամակ խմբագրութեան. Երբեք լու-
րեր.— ԱՐՄԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բոլշաքիա. Դամակ
Պարսկաստանից. Արտաքին լուրեր.— ԽՈՒՆ ԼՈՒ-
ՐԵՐ.— ՀԵՌԱԿԻՐՆԵՐ.— ԲՈՐՍԱ.— ՅԱՅՍԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ:

ՀԵՄԼՄՈՅ

Երեկ հեռագիրը գուժեց պրօֆեսոր Հեր-
ման-Վուլֆի-Ֆրիդրիանը Հէլմօլցի մահը:
Ձը նայելով որ արդէն մի քանի ամիս լրա-
գիրներում տեղեկութիւններ էին տպւում
նրա հիւանդութեան մասին, բայց և այնպէս
Հէլմօլցի մահի մասին լուրը մեծ ցաւ կը
պատճառէ ամբողջ գիտական աշխարհին:
Հէլմօլցը, որը ժամանակակից ամենամեծ
քննադատներից մէկն է, ծնվել է Պոտսդամ-
ում 1821 թվի օգոստոսի 19-ին: Զօր
ցանկութեամբ 1838 թվին նա մտնում է
Ֆրիդրիխ-Վիլհելմի գիւնդական բժշկական
ինստիտուտը բժշկութիւն սովորելու հա-
մար: Հոսիակաւոր ֆիզիոլոգ Եօհան Միլլեր-
րի ազդեցութեան տակ, Հէլմօլցը նուիրեց
իրան ֆիզիոլոգիայի ուսումնասիրութեանը,
և քննադատի դասընթացը բերուց յետոյ,
պաշտպանեց 1842 թվին իր դոկտորական
դիսերտացիան «De fabrica Sistimatis
neurosi evertetatorum» վերնագրով: Նոյն
թվին Հէլմօլցը օրինաւոր է նշանակուում
Բերլինի Charité հիւանդանոցում, իսկ
1843 թվին գիւնդական բժիշկ է նշանակ-
ուում Պոտսդամում:

Անընդհատ պարապելով ֆիզիոլոգիական
հետազոտութիւններով, Հէլմօլցը չէ թողնում
է մեքենայագիտութեան և ֆիզիկայի
հարցերը, որոնցով մանկութիւնից հետա-
քըքրվում էր, և 1847 թվին հրատարա-
կում է «Ueber des Erhaltung der Kraft»
իր կատարական աշխատութիւնը: Հէլմօլցը
1848 թվին անատոմիայի դասաւոր է նը-
շանակուում Բերլինի գեղարուեստների ակա-
դեմիայում հռչակաւոր Բրիւկկէի տեղ, իսկ
1850 թվին ֆիզիոլոգիայի և ընդհա-
նուր պաթոլոգիայի պրօֆեսոր է նշանակ-
ուում Կենդանաբանական համալսարանում:
Այդ տեղ է Հէլմօլցը կատարում իր հետազո-
տութիւնների մեծ մասը՝ զբաղմունքների
ֆիզիոլոգիային վերաբերելով, և ապա նոյն-
ըն շարունակում է և Բոննում, և Հէյդելբեր-
գում, ուր նա 1858 թվից մինչև 1871
թիւը կարգում էր դասախօսութիւններ
ֆիզիոլոգիայից:

Մի և նոյն ժամանակ մեծ հռչակ ստա-
նալով ֆիզիկայում իր արած աշխատանք-
ներով, Հէլմօլցը 1871 թվին հրաւիրուում
է Բերլինի ֆիզիկայի ամբիօնը գրաւելու, ուր
և մտնում է մինչև 1888 թիւը, ղեկավարե-
լով 1874 թվին հիմնած նոր ֆիզիկական
ինստիտուտը: 1883 թվին Վիլհելմ կայսրը
չնորհուում է Հէլմօլցիցին ազնուականութիւն,
իսկ 1888 թվին նոր հիմնված կառավար-
չական ֆիզիկո-տեխնիկական ինստիտուտի գի-
րեկաւոր է նշանակուում Շարլօտենբուրգում,
շարունակելով մի և նոյն ժամանակ ֆի-
զիկայի դասախօսութիւններ կարգել հա-
մալսարանում:

1891 թվին ամբողջ աշխարհի գիտնա-
կանները հանդիսաւոր կերպով տօնեցին
Հէլմօլցի եօթնամասնամայ տարեդարձը:
Հէլմօլցի որդին, Բօքերտ Հէլմօլցը, մեծ
յոյսեր առող կրկնապարգ ֆիզիկոսը, վա-
ղճաժամ վախճանվեց 1889 թվին, թողնելով
պարտք գազերի ճառագայթաբանական վե-
րաբերելու աշխատութիւնը:

Խորը փիլիսոփայական խելք ունենա-
լով և տարօրինակ ընդունակութիւն
ղեկի ինդուկտիվ մտածողութիւնը, Հէլմ-

Տօլց միտ նոր և ինքնուրոյն բան էր
մտցնում բնութեան վերաբերելու գիտու-
թեան բոլոր շրջաններում: Ֆիզիոլոգիայում,
ֆիզիկայում, մեքենայագիտութեան մէջ, օրե-
րեցօրեց արտաբնութեան, մինչև անգամ հոգե-
բանութեան և մտքնաստիկայի մէջ:
Ոչ պակաս նշանակութիւն ունի Հէլմ-
Տօլցի և ուսուցչական գործունեութիւ-
նը: Նրա անմիջական ղեկավարութեամբ,
նրա լաբորատորիաների մէջ Բոննում, Հէյ-
դելբերգում և Բերլինում և նրա գրուածք-
ների ազդեցութեան տակ կազմակերպվեց
ֆիզիկոսների և ֆիզիոլոգների ժամանա-
կակից սերունդը: Առհասարակ Հէլմօլցի
գործունեութիւնը, որպէս գիտնականի և
ուսուցչի, իսկական ուղղութիւն տուց ժա-
մանակակից ֆիզիոլոգիային և ֆիզիկային, և
նոյնպէս շատ ազդեց այդ գիտութիւնների
զարգացման վրա ամեն տեղ: Իր գործու-
նեութեամբ գիտութեան մէջ նա թողեց
մի անջնջելի հետք:

ՀՈՍԻ ՊԱՊԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

Մի քանի ժամանակ առաջ եւրոպական
լրագիրները յայտնեցին, որ Հոսի պապը
Լեոն XIII, մտադիր է հրատարակել մի
շրջաբերական կենդակ, զլսաւորապէս ա-
րեւելեան եկեղեցիներին ուղղած, հրաւիրե-
լով նրանց միանալ կաթօլիկ եկեղեցու
հետ: «Մշակի» № 70-ի մէջ մենք եւրո-
պական լրագիրներից առնելով հարցրու-
ցիք այդ կենդակի բովանդակութեան վը-
լաւոր կէտերը:
Այս օրերս հրատարակվեց այդ կոնդակը
և նրա հետ միասին նրա թարգմանութիւ-
նը բոլոր արեւելեան լեզուներով, ի միջի
այլոց և հայերէն լեզուով: Այդ թարգ-
մանութեան մի օրինակը, որ ինչպէս երե-
ւում է, տպւած պէտք է լինի վեցերեւո-
յում, այս օրերս ստացվեց մեր խմբագրու-
թեան մէջ:

Այդ նոր կոնդակի մէջ Լեոն XIII պա-
պը մի և նոյն հիւն երգն է երգում, ինչ
որ երգել են ամբողջ դարերով Հոսի պա-
պերը: Նա ցաւում է, որ քրիստոնէաների
մի մասը հեռու է կաթօլիկէ հաւատից
և որովհետեւ ինքն, Լեոն պապը, «ամենա-
կալ Աստուծու փոխանորդ է երկրի վրա»,
ուստի նա բարոյապէս պարտաւոր է գրու-
ման հրաւիրել այդ քրիստոնէաներին միա-
նալ կաթօլիկ եկեղեցու հետ: Նա իր
հրաւիրան ամենից առաջ ուղղում է արեւ-
ելեան եկեղեցիներին—յոններին, հայերին,
ասորիներին, ի նկատի ունենալով որ այդ-
տեղից սկսվեց աշխարհի փրկութիւնը:
Բայց կատարելով այդ հրաւիրանը, պապն
ինքն զգում է, որ միութեան զլսաւոր ար-
գելքը, Հոսի հայրապետի զլսաւորու-
թեան և գերիշխանութեան խնդիրն է:

Անկեղծապէս խօսելով մենք նմանաբան
էինք ի նկատի ունենալով Լեոն պապի
վերաբերմամբ եղած գովեստները, թէ պա-
պը պէտք է յայտնէ, որ բուն քրիստոնէա-
կան և առաքելական եկեղեցու տեսակէտից,
Քրիստոսի եկեղեցու մէջ ոչ որ զլսաւոր
չէ, միակ գլուխը Քրիստոսն է, իսկ արեւ-
մտեան և արեւելեան եկեղեցիները՝ քոյրեր
են և ոչ որ գերիշխանութիւն չունին: Բայց
մեր այդ կարծիքը հիմնովին սխալ գուրս
եկաւ: Լեոն պապը իր բոլոր հետադար-
կան, իր բոլոր աստուածաբանական հմու-
թիւնը թափում է ապացույցներով, որ
Հոսի պապը ընդհանրական եկեղեցու
գլուխն է, որովհետեւ Քրիստոս ասել է
Պետրոս առաքելային, թէ «չեւ ես վե՛րք
այդ վե՛րք վրա կը շինեմ իմ եկեղեցին»,
այդ պատճառով էլ պապը, իբրև Պետրոս
առաքելայի յաջորդ, Քրիստոսի փոխանորդն
է երկրի վրա:
Պապը մտնում է, որ ուր գերիշխա-

նութիւն կայ, ուր իշխելու ցանկութիւն և
ձգտումն կայ, այնտեղ չէ կարող լինել միու-
թիւն, եղբայրութիւն, այնտեղ չէ կարող
լինել հաւասարութեան յարաբերութիւն:
որտեղ իշխող կայ, այնտեղ պէտք է լինի և
հպատակող:

Պապը մտնում է Աւետարանի խօսքե-
րը, թէ «ոչ որ ձեզանից մեծ չէ և բոլոր-
րեքեանդ մի էք, եղբայր և հաւասար»:
Քարոզելով միութիւն և այդ միութեան
իրբև հիմն ընդունել Հոսի պապի գե-
րիշխանութիւնը, օրեկերական տիրապե-
տութիւնը այդ կը նշանակէ աւելի և աւե-
լի վիճ ձգել արեւմտեան և արեւելեան ե-
կեղեցիների մէջ: Եւ ի հարկէ, Լեոն պա-
պի հրաւերը արձագանք չի գտնի և կը
մնայ սպառիչուն ու դատարկ հրաւեր:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՈՍԱՍՏԱՆԱԿԱՆ ԲԵՏՈՐՄՆԵՐԻ ՀԱՐՅԸ

Մեր ընթերցողները գիտեն արդէն, որ ներ-
կայուն կատարում է դատաստանական օրէնք-
ների վերաքննութիւնը մի առանձին, բարձրա-
գոյն հաստատված յանձնաժողովի ձեռքով, ար-
դարադատութեան միջնորդի նախագահութեամբ:
Այդ յանձնաժողովին իրաւունք է տրված խոր-
հրդակցութեան հրաւիրելու նիստերի ժամանակ
բանիմաց և փորձառու անձերին: Գանձաժողովի
նախագահ արդարադատութեան միջնորդը որոշել
է շատ լայն կերպով օգուտ քաղել այդ իրաւուն-
քից և հրաւիրել հասարակութեան անմիջական
մասնակցութիւնը դատաստանական օրէնքների
վերաքննութեան գործում:

Այդ նպատակով տպագրված է մի ծանուցում,
որի մէջ, ի միջի այլոց, ասված է հետեւեալը:
Բարձրագոյն հաստատված վերաքննիչ յանձնա-
ժողովը իր առաջին նիստերում որոշել է նուի-
րել այս ամարային ամիսները նիթեր հաւաքե-
լու նախապատրաստական գործողութիւններին:
Գանձաժողովի աշխատութիւնները ըստ էութե-
ան կը սկսվին այնու, երբ յանձնաժողովի
բաժանմունքների կողմից կողակցվին դատաս-
տանական հաստատութիւններին և դատաստա-
նական անձերին ծրագրի բովանդակութեան հա-
մաձայն մշակված հարցերը, որոնց մասին ցան-
կալի էր ստանալ դատաստանական գործիչների
կարծիքները:

Բայց մինչև այդ հարցերի ճշգրիտ ձևակերպու-
թիւնը և նրանց պատասխանները ստանալը,
յանձնաժողովի նախագահը, արդարադատութեան
միջնորդ Մուրավիեվ, օգտակար է համարել,
ինդրի բաղակողմանի քննութեան համար, ձեռք
բերել այն բոլոր տեղեկութիւնները, որ դատաս-
տանական գործիչները և բանիմաց անձինք զուրս
են բերել իրանց պաշտօնակարութեան ժամանակ
անձնական փորձառութիւնից դատաստանի կազ-
մութեան և դատավարութեան վերաբերմամբ:
Այդ նպատակով նա ղեկն է շրջաբերակալում
նախկին հաստատութիւնների և ստորին դատաստա-
նական հաստատութիւնների նախագահներին և
պրոկուրորներին, հրաւիրելով նրանց որ ամեն
մի ցանկացող, եթէ ունի անկող. որ և է դա-
տարութիւն, նկատողութիւն գործող օրէնքների
այս կամ այն կէտի կամ յարաբերութիւններ
վերաբեր-
մամբ, թող իր այդ դիտողութիւնները ներկայաց-
նի յանձնաժողովին, որը չնորակալութեամբ կըն-
դուսի ամեն մի բարեխիղճ աշխատութիւն և գու-
ցէ մինչև անգամ կը տպագրի «Հաւաքածուների»
մէջ:

Թող ոչ որ չը քաշվի, ասում է միջնորդը,
դատաստանական խնդիրների մասին ունեցած իր
հայեացքների տարբերութիւնից. բաւական է, որ
այդ հայեացքները բարեխիղճ լինեն, խնայի,
հիմնված գործի անմիջական ուսումնասիրութեան

վրա և համակված նրան օգնելու անկեղծ ցանկու-
թիւնով: Տարբեր կարծիքների ընդհարումից աւե-
լի հեշտ է ըզլուում ճշմարտութիւնը, du choc des
opinions jaillit la vérité, այդ պատճառով մենք եր-
կիւղ չենք կրում մինչև անգամ ամենաձայնահեղ
մտքերից, եթէ այդպիսի մտքեր ևս արտայայտ-
վեն:

Ձը բաւականապէս փորձառու և բանիմաց
անձերի մասնակցութիւնով, և իմանալով որ հա-
սարակաց կարծիքի ամենալաւ արտայայտիչը մա-
մուլն է, և սա կարող է ու մինչև անգամ
կոչված է ամենամեծ ծառայութիւն մատուցա-
նել այդպիսի մի կենսական գործի մէջ,
միջնորդը հրաւիրում է և մամուլը՝ մասնակ-
ցելու օրէնքների վերաքննութեան գործի մէջ,
միայն, շատանց արժեք չունելու, այլ լրջաբար,
չըրանայեցութեամբ, ինչպէս այդ պահանջում է
ամեն մի լուրջ պետական գործ: Այնպէս է,
ասում է նա, թագցնել հասարակութիւնից այն,
ինչ որ վերաբերելով ամենքի և իւրաքանչիւրի
չաներին, գրաւում է դէպի իրան ընդհանուր ուշա-
դրութիւնը, ուստի և չը հրատարակելով, յարու-
ցանում է ամենահակասական զրոյցներ ու փրս-
փսոցներ:

Եւ այդպէս ուրեմն, ինքն բարձր կառավարու-
թիւնը, արդարադատութեան միջնորդի բերա-
նով, հրաւիրում է հասարակութիւնը և մամուլը
մասնակցել նոր օրէնքների մշակութեան գործի
մէջ:

ԵՐԵՎԱՆԻ ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Թող բնաւորութեան տէր մարդիկ, հասարակա-
կան որ և է պայքարի ժամանակ, լինի այդ պայ-
քարը յանուն կուսակցական նպատակների, թէ
յանուն իրենցների, երբ նկատում են, որ պայքա-
րը մեծ և անհզին տարածութիւն է ստա-
նում, սկսում են յետ քաշվել, և կամ բոլոր-
ովին դադարում են որ և է ներգործական դեր
խաղալուց, կամ հրատարակում են իրանց չէզոք
և բարձր զանազան կոնիւրերից:
Այդ չէզոքութեան վարագոյրով նրանք կամե-
նում են ծածկել իրանց բարոյական անկարողու-
թիւնը: Բաւական է, վերջապէս,—ասում և յոր-
դորում են նրանք,—պէտք է կուսից բարձր կանդ-
նել, պէտք է ներողամիտ, համբերատար լինել
դէպի հակառակորդները, չը պէտք է այդքան ան-
խնայ հաշածել նրանց, համբերատարութիւնը, նե-
րողամտութիւնը մարդկային պարտաւորութիւնն
է:

Եւ ճշմարիտ, կը կրկնեք մենք, համբերողու-
թիւնը (tolerance, терпимость) ոչ միայն մարդ-
կութեան պարտաւորութիւնն է, այլ և փիլիսոփա-
յական ամենալին միտք:

Բայց ոչ մարդկային պարտաւորութիւնը, ոչ
փիլիսոփայական ամենալին միտքը, ոչ ևս առողջ
դատողութիւնը երբեք չեն քարոզում անպայ-
ման և ընդհանուր համբերողութիւն, ներողա-
մտութիւն:

Պէտք է իմանալ երբ և որ պարագայում պէտք
է համբերող լինել, երբ անդրուելի և անխնայ
հալածող:

Ֆրանսիացի գիտնական Ժյուլ Լեմէտր նորե-
րումս ֆրանսիական ուսանողների առաջ իր ար-
տասանած մի ճառի մէջ, խօսելով համբերողու-
թեան մասին, որոշում է երեք տեսակ համբերու-
ղութիւն. — Խօսքի, գործի և զգացումի
համբերողութիւն, որոնք համապատասխանում են
մարդկային հոգու յայտնագործութեան երեք կա-
րերը շրջաններին—դրակ ան ու թ և ան, քա-
ղ աք ա կ ա ն ու թ և ան և կրօն ի ն:

Այդ երեք շրջանների մէջ կարելի է և պէտք է
համբերող լինել, որովհետեւ այդ համբերողութիւ-
նը հիմնված է անձն աւ ու թ ու թ և ան յ ա թ
գ ա ն թ ի վրա, իսկ ան ձն աւ ու թ ու թ և ան

յ ա ր գ ա ն ք ր ի ս կ ա կ ա ն , ճ շ մ ար ի տ կ ու լ տ ր ա յ ի , ք ա ղ ա ճ ա կ ա ն ո Ւ թ ի ա ն հ ի մ ն ա կ ա ն ն ա յ ա տ ա կ ր և ար - ղ ի ն ը ր ն է կ ա ղ ա լ ու մ :

Արևմտեան եւրոպական մարդը համբերող է զէպի օտարի մտքի ծնունդը, նա ձգտում է գրտնել օտարի գրականութեան մէջ միացնող կապ: Արևմտեան եւրոպական մարդը համբերող է զէպի օտարի, իր հակառակորդի քաղաքական հայեացքները: Արևմտեան եւրոպական մարդը համբերող է զէպի օտարի, իր հակառակորդի կրօնական համոզմունքները, ընդունելով նրանց իբրև ներքին խղճի արդիւնք: Եւ նա համբերող է այդ բոլոր շրջանների մէջ, որովհետև այդ համբերողութիւնը հիմնված է անձնաւորութեան յարգանքի գաղափարի վրա, մի գաղափար, որի սերմը ցանց հռոմէական իրաւունքը, առաջին անգամ մշակելով անձնաւորութեան ճանաչողութիւնը և յարգանքը զէպի նա, և որը աճեցրեց, դարգացրեց եւրոպայան:

Այդպէս չէ արևելեան ասիական մարդը. նրա մէջ շատ քիչ դարգացած է անձնաւորութեան յարգանքի զգացումը. նա անխնայ հալածում է իր ընկերին, իր եղբորը, եթէ նրանց կրօնական համոզմունքները, մտքերը տարբեր են, եթէ նա նոյն աչքով չէ նայում իրերի վրա, ինչպէս ինքը, բայց նա՝ այդ ընկերին, այդ եղբորը չէ հալածում, եթէ նա մեղանշում է բարոյականութեան, արեւելեան և շիտակութեան զէպի:

Ճշմարիտ է, Գրիստոս ընդունում էր մեղաւորներին, աշխատում էր դարձի բերել նրանց և երբ դիմում էին իրան բռնկութիւն հայցելով, բռնկում էր, բայց խարաղանով հալածում էր տաճարից դուրսը, վաշխաւորներին:

Թէ քրիստոնէութիւնը և թէ արևմտեան եւրոպական կուլտուրան քարոզում են ներողամտութիւն, համբերողութիւն զէպի անձնաւորութիւնը, զէպի անհատը, բայց խիստ քննադատութիւն զէպի նրա արարքը, նրա գործը:

Պէտք է համբերող լինենք զէպի միմեանց, որովհետև հարկաւոր է յարգանք ունենալ զէպի անձնաւորութիւնը, բայց այդ համբերողութիւնը պէտք է վերաբերի միայն անձնաւորութեան, կենդանի անհատին:

Պէտք է համբերող լինենք զէպի մարդը, որը այլ սովորութիւններ, այլ հաստատութիւն, այլ համոզմունք է կրում, բայց միայն և բացարձակաբար զէպի իրան մարդը, զէպի կենդանի անհատը. բայց անպայման պէտք է անհամբերող լինենք զէպի այն ամենը, ինչ որ կազմում է նրա յատկութիւնը, եթէ այդ ամենը մենք խոստովանում ենք իբրև ստույգ և չարիք: Ում մէջ զարգացած չէ աստուածական զգացումը զէպի չար և սուտը, նրա մէջ չը կայ և սիրոյ զգացում զէպի բարին և ճշմարիտը: Երբ մի մարդ հիւանդ է, մեր բարոյական պարտաւորութիւնն է ինքնուրիշ նրան, օգնել, բայց մի և նոյն ժամանակ մենք պարտաւոր ենք անխնայ կուռլ նրա հիւանդութեան, նրա վարակող միկրոբների զէպի: Խաղաղ մարդուն մենք կարող ենք կարկնել և օգնել, եթէ նա կարօտ է օգնութեան, թշուառութեան մէջ է. բայց միանալ նրան և նրա հետ միասին մի ընդհանուր դործ կատարել, այդ կը նշանակէ իջնել մինչև նրա մակերեսը:

Որքան որ կամենայինք համբերող, ներողամիտ լինել զէպի մի անձնաւորութիւն, իբրև մարդու, բայց չէնք որ տեսնենք, որ այդ մարդը քարոզում է այնպիսի մտքեր, գաղափարներ, տարածում է այնպիսի համոզմունքներ, որոնք հակասում են ճշմարտութեան, այդտեղ լռելը, համբերող լինելը պէտք է նկատել իբրև յանցանք:

Սակայն եթէ այդ անձնաւորութիւնը դադարում է արտայայտիչ լինել ստույգութեան, խաբէութեան, դադարում է քարոզել ճշմարտութեան հակասող մտքեր, այն ժամանակ մենք ևս պարտաւոր ենք դադարեցնել մեր հայածանքը, որովհետև հարուածելով, մտրակելով այս կամ այն անձին, մենք չենք ուզում հալածել անձնաւորութիւնը, այլ այն ստույգութիւնը, կեղծութիւնը, մոլութիւնը, անբարոյական արարքը և գաղափարները, որ այդ անձինք տարածում են և քարոզում:

«Մշակը» իր գործունէութեան ընթացքում շարունակ կուռլ և այդ եղանակով, ցոյց տալով անխնայ աննկողմամտութիւն զէպի խաւարմիտ բանակի ներկայացուցիչները. նա հալածել է ոչ թէ անձնաւորութիւնները, այլ այն խարդախ, անբարոյականացնող կեղծ մտքերը, ստույգութիւնները, որ այդ անձնաւորութիւնները ջանացել են

տարածել հասարակութեան մէջ և մոլորեցնել նրան:

Ուրեմն լինենք համբերող զէպի մարդը, անձնաւորութիւնը, բայց լինենք անպայման աննկողմամիտ զէպի մեղանից սուտ, կեղծ, անբարոյական ճանաչված մտքերը, արարքը, և անխնայ հալածենք նրանց:

Հ. Ա.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽԱՏԻՍԵԱՆԻ ԹԱՂԱՌՄԸ

Կիրակի, ամսիս 28-ին, տեղի ունեցաւ հանգուցեալ Յովհաննէս Խատիսեանի թաղումը: Առաւօտեան ժամը 9-ին, մեծ բազմութեան ներկայութեամբ, հանգուցեալի դագաղը իջնցրին երկաթուղու վազմինց. կայարանի բազում, հոգեհանգիստ կատարելուց յետոյ՝ սկսվեց յուղարկաւորութիւնը զէպի վանքի մայր եկեղեցին:

Գաղաղը երկաթուղու կայարանինց սկսած մինչև եկեղեցին տարան ձեռքերի վրա փոփոխակի նրա ծառայակիցները, ազգականները, յարգողները, Ազգեգործական դպրոցի աշակերտները և Կարայաղի թուրքերը, որոնք եկել էին իրանց յարգանքը ցոյց տալու հանգուցեալին:

Գաղաղի ետևից գնում էին կարգով Ազգեգործական դպրոցի աշակերտները, Կովկասեան Գիւղատեսակեան ընկերութեան անդամները, պետական կալուածների վարչութեան պաշտօնեաները, փոխ-նահանգապետ Տիգլանուզէն, գաղտնաւորական պալատի նախագահ Բիլով, քաղաքացու խղճայով, Կարայաղի ընկերութեան ներկայացուցիչները, ջրաբաշխական վարչութեան պաշտօնեաները, թիֆլիսի մի քանի լրագրիչներ խմբագրութեան ներկայացուցիչները, Յովհաննէս օրիորդաց դպրոցի ներկայացուցիչները և այլ անձինք:

Վանքի բազում թաղման ներկայ էին թիֆլիսի նահանգապետ իշխ. Երվաչիձէ, Կովկասի կառավարապետի խորհրդի անդամ Կալիբով: Վանքում բազմութիւնը բաւական մեծ էր, և գլխաւորապէս ինտելիգենտ հասարակութիւն, զանազան ազգութիւններից:

Չանազան անձինք և հաստատութիւններ դրել էին հանգուցեալի դագաղի վրա պահներ. Կովկասեան Գիւղատեսակեան ընկերութիւնը, Կարայաղի ընկերութիւնը, պետական կալուածքների թիֆլիսի վարչութիւնը, ջրաբաշխական վարչութիւնը և պրօֆէսոր Խրչի Գամբարեան դրել էին արծաթեայ պահներ: Միւս պահներն էին՝ Ազգեգործական դպրոցից, Գորգանեան եղբայրներից, Ա. Քալանթարից, հանգուցեալի ծառայակիցներից, շրջամապահական կայարանից, Էլիմիր-զեաններից և այլն:

Եկեղեցում թիֆլիսի թեմական առաջնորդը քարոզ խօսեց հանգուցեալի յիշատակին: Ապա եկեղեցու բաղնիք, գերեզմանի վրա, խօսեցին դամբանականներ՝ Գիւղատեսակեան ընկերութեան փոխ-նախագահ Երմանովսկի և պետական կալուածների վարչութեան պաշտօնեայ Չախրիզէր: Առաջինը ընտրողում էր հանգուցեալին, իբրև Գիւղատեսակեան ընկերութեան գործիչի, երկրորդը՝ իբրև մարդու թաղումը վերջացաւ ժամը 12 1/2-ին:

Օգոստոսի 28-ի թաղման տպագրութեան տակ, հարկաւոր ենք համարում շնորհիւ հանգուցեալի գործունէութեան մի քանի գծերը:

Խատիսեանի անուան հետ կապված են մնում մեր երկրի անտեսական կենսի բազմաթիւ խնդիրները: Նա այնքան սերտ մասնակցութիւն ունէր այդ խնդիրների ընթացքին և մշակութեան մէջ, որ ամեն անգամ, երբ խօսք է բացվում դրանցից որ և է մէկի մասին, ինքն ըստ ինքեան ներկայանում է խատիսեանի շինող և կազմակերպող ոգին:

Թիֆլիսում գոյութիւն ունեցող Ազգեգործական դպրոցի հիմնելու գլխաւոր նպատակն է եղել Խատիսեան, որը յանձն էր առել նրա ծրագրի մշակութիւնը և միջնարարութեան հետ պայմանաւորութիւնը:

Ջրաբաշխական օրէնքների սկզբնական մշակութեան ամենամեծ գործողն է եղել Խատիսեան, որը կազմել է Կարայաղի առուի ջրաբաշխական կազմակերպութիւնը և ապա ամենակցել բոլոր այն նիստերին, ուր քննվել են ներկայումս գործող օրէնքի յոգուածները:

Բաժարակազմութեան զարգացման, մոբիլ ջնջելու, խաղողի օրուակցիցը իջնցնելու, ֆի-

լիսէրիայի դէմ մաքառելու, տաւարի հիւանդութեան դէմ կուռլու և այլ շատ խնդիրների ջնջումը և յաճախ զեկաւարողը:

Թիֆլիսի նահանգի պետական գիւղացիները զգում են ամենից աւելի այդ կորուստը, գրկվելով մի այդպիսի հոգացող, կարկեցող կառավարչից, որը ամենից լաւ գիտէր նրանց ցան ու կարիքը և նրանց դարմանելը:

Գիւղատեսակեան ընկերութեան գործունէութեան մէջ նա այնքան նշանաւոր դեր էր կատարում, որ այդ ընկերութեան գործունէութեան էական կէտերը ուսումնասիրելու ժամանակ, պէտք է զբաղվել գլխաւորապէս Խատիսեանի գործունէութեամբ:

Բացի այն ծառայութիւններից, որ նա արել է, նա մեծ դեր է կատարել կառավարչական դրժուար և պատահաւանաւոր յանձնարարութիւններին ժամանակ, ինչպէս են Սև ծովի հիւսիս-արեւելեան ափում Փոքր-Ասիայից ելած զաղթականներին հաստատ ընկերութիւն տալը, ուսումնարանական պատերազմի միջոցին եկած թիւրքահայ զաղթականների դրժութիւնը ուսումնասիրելը և նրանց խնամելը, Հիւսիսային Կովկասում էստօնական գաղթականների կարիքների աջող ուսումնասիրութիւնը և այլն:

Խատիսեանի վերջին, աչքի ընկնող զեկուցումը վերաբերում է Երևանեան նահանգի անցեալ տարվայ անբերրութեան դէմ մաքառելու խնդրին: Նա ընտրված էր անբերրութեան պատճառներին ուսումնասիրութեան յանձնաժողովի պատուաւոր նախագահ:

Այն ընդարձակ գործունէութեան մէջ, որ վերաբերում էր մեծ մասամբ կովկասեան ազգաբնակչութեան կենսին, նա մասնակցութիւն էր ընդունում և բուն հայոց գործերում, կամ իբրև դպրոցական հոգաբարձու, կամ իբրև պատգամաւոր:

Օգոստոսի 27-ին թիֆլիսի հասարակութիւնը թաղեց Կովկասի խոշոր գործողներից մէկին, որի անունը կը մնայ անմոռանալի Կովկասի կուլտուրական պատմութեան մէջ:

ՆԱՍԱԿ ԱԼԷԿՍԱՆԴՐՈՊՈՒՅՑ

Օգոստոսի 16-ին

Անցեալ 1891, 1892 և 1893 թւականները սարսափելի ծանր և անտանելի էին մեր երկրի ազգաբնակչութեան համար: Առաջինի անբերրութիւնը, երկրորդի համաճարակ խօլերան և վերջապէս անցեալ տարվայ սովը կատարելապէս ուժապառ արեցին մեր շինական դասակարգը: Երկրագործը կորցնելով իր բոլոր շիւթական միջոցները, կորցնելով լծկանը, կիտանը, կանկարաւորը, ստիպված եղաւ քանդել մինչև անգամ իր վաղեմի խրճիթները և փոխարէն ծախել իր սոված ընտանիքը մահաց ազատելու համար:

Բոլորի յոյսը դրված էր ներկայ տարվայ հնձի վրա: Ուրախութեամբ կարող ենք հաղորդել, որ ներկայ հունձը Երևակի մէջ շատ լաւ է. կատարելա լիութիւն, կատարելա առատութիւն է տիրում ամեն տեղ. հունձը աւելի լաւ է արևմտեան Երևակում, այնպէս որ, ինչպէս շատերը պատմում են, այս տարվայ պէս առատ հունձ շատ քիչ են տեսել:

Գծբխտաբար, այս տարի, սերմացու չը լինելու պատճառով, շատ գիւղացիք ստիպված եղան զետիւր սև թողնել, այսինքն չը ցանել, շատերը ստիպված եղան ցանել ծանր պայմաններով:

Քաղաքացի վաշխաւորն, օգտվելով գիւղացու անկանելի դրութիւնից, առաջարկում է այնպիսի հնէաւոր պայմաններ, որ մարդ լսելիս մտղեր փշաքարվում են: Նա սալիս է ցանելու ցորենը՝ այն պայմանով, որ շինականը ցանէ իր սեփական հողի վրա, իր սեփական եզներով ջրէ, կայտէ, հնձէ, կրէ, յետոյ սերմը հանէ յօգուտ սերմատիրոջ, մնացած արդիւնքից էլ երկու բաժինը սերմատիրոջը, մէկ բաժինը գիւղացուն, մի խօսքով կատարելա բարբարոսութիւն, կատարելա զազանութիւն. ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ գիւղացին ստիպված է այդպիսի հնէաւոր պայմաններ ստորագրել, այլպէս նա չէ կարող ցանել իր գետինը, իսկ առանց ցանքի նա միջոց չունի ապրելու:

Լսում ենք, որ կառավարութիւնը, լսելով վաշխաւորների արած հարտահարութիւնները, հրամայել է, որ տոկոսով վերցրած հացը յետ տան երկու տոկոսով, այսինքն տասը պուղի տեղ

տաաներկու պուղ տան և ոչ թէ տանն պուղի տեղ 20—25 պուղ, ինչպէս մինչև այժմ առնում էին: Կառավարութեան այդ մարդասէր կարգադրութիւնը դարձեալ ուզում են քողարկել լուրեր տարածելով, թէ այդ օրէնքը այս տարի ոչ չուներ, միայն եկող 1895 թւականին ոչ չկունենայ: «Չը կայ չարիք առանց բարիքի», ասում է առածը. այս տարի Երևակում, սերմ չը լինելու պատճառով, շատերը ստիպված եղան Ռուսաստանի սերմացու ցանել: Երևականները յոյս չուներին Ռուսաստանի սերմի վրա. բայց հակառակ այդ կարծիքի, Ռուսաստանից բերած գարին երկու անգամ աւելի առատ բերք տուեց, քան տեղականը. Երևակի գարին ծղօտի վրա ունի երկու ձիւղ, իսկ Ռուսաստանի սերմը այստեղ բուսել է չորս ձիւղով, այնպէս որ ցանողը համար շատ չահաւէտ է ցանել Ռուսաստանի սերմից, որովհետև կրկնակի օգուտ է տալիս: Բացի այդ, նրա հատիկները թէ խոշոր են և թէ լաւ:

Երևակեցի

ՆԱՍԱԿ ԽՄԱՐԱԳՈՐԹԵԱՆ

Թիֆլիս, օգոստոսի 28-ին

Առանց գրչի հրատարակիսու և առանց իր գէտների խմբագիր Արգար Յովհաննիսեան կաշուից դուրս է գալիս, որ ապացուցանէ, թէ մի ժամանակ են եղել եմ հանգուցեալ Արծրունու հակառակորդ և «Արծազանքի» բարեկամ: Նա մի այնպիսի վայնասուն է բարձրացրել, որ, կարծէք. հայաստանեայց առաքելական եկեղեցին վտանգի մէջ է:

Անցեալ անգամ ես ստեցի, որ մի կարճ միջոց լարված եմ եղել Գրիգոր Արծրունու դէմ: Բայց ապացուցեցի նոյնպէս, որ «Արծազանքին» աշխատակցելով, ես երբէք արձագանքակալ եմ չեմ եղել: Յովհաննիսեան չը բաւականապէս իմ սասածով, քիթը իր գամբիղների մէջ խրած, հնազանդական հետազոտութիւններ է անում և ամեն անգամ երբ իմ մի ձեռագիր գտնում է, սկսում է օտոտտալով շախիւս վախճան կանչել: «Արծազանքի» ապարդղ սինակները լըցվում են իմ դէմ այնպիսի յիշոցներով, որոնց նըմանը կարելի է լսել Յովհաննիսեանի սիրած հիմնարկութիւններում:

Երբ ես բացարձակ ասում եմ, թէ իմ կեանքի ամենախոշոր սխալն է և զիւր «Արծազանք» կոչված թերթին աշխատակցելը, այն ժամանակ Արգար Յովհաննիսեանի առաջ բերած արհուլանտները ինքն ըստ ինքեան ջրվում են, և նա, եթէ կամենում է, կարող է նորից տպել և արտատպել իմ տպած և անտիպ յօդուածները:

—Չը դիտեք, ինչ դառն սխալ է Արգար Յովհաննիսեանի պէս մի մարդու մտնելը: Արծրունիս իրաւունք ունի ինձ պիտարակելու, որ ես «Արծազանքի» պէս մի եղբորական թերթի աշխատակից դարձայ:

Այս խօսքերը ստեց ինձ Ռաֆֆին իր մահից երեք օր առաջ: Յովհաննիսեան յանդգնել էր մի ինչ—որ հաշուաւորի պատճառով, վիրատուրել ազդի ամենալաւ վիղատանիս այն ժամանակ, երբ վերջինը մահուան անկողնումն էր: Թէ ինչու հաշուաւորը այնքան կուրացրել էր պարսին—դա անկասկած ունէր իր խորախորհուրդ պատճառները, որոնց մասին պէտք է հարցնել հաշուաւոր երէցիսինս: Ռաֆֆին կարողաց այդ վիրաւորանքը, արտասանեց յիշեալ խօսքերը և «Արծազանքի» համարը զգուանքով չպրտեց այն անկիւնը, ուր երեք օր յետոյ Արգար Յովհաննիսեան կոկորդիլոսի արցունքներ էր թափում վիղատանի խաղաղի վրա...

Եթէ այդպէս խաղաղ և փոշմանց Ռաֆֆիի պէս մի հմուտ վիղատան հրատարակիսու, որ 30 տարի գործում էր գրականական ասպարիզում, ինչ գարմանալի բան է, որ խաղվէր ինձ նման մի անփորձ մարդ, որ 3 տարի չը կար ըսկել էր գրականութեամբ պարագլել, երբ հանդիպեց մի ճարպիկ մարդու:

Նոյն իսկ եթէ ես եղած լինէի թոնդ արձագանքակալ և այժմեանի պէս զգուանքով երես դարձնէի «Արծազանքի» բացարձակ կը խոստովանվի, թէ, այո, եղել է ժամանակ, որ դաւանել եմ մի հակակրկի սկզբունք, որ ից այսօր դարչուում եմ Բայց, կրկնում եմ, ես երբէք արձագանքական չեմ եղել, ուրեմն ինչու է Յովհաննիսեան այդքան շփոթվել:

Կան բարոյապէս դժբաղդ արարածներ, որ

ընդ որում և ինչպէս որ մի անկողնի վրայ չեն կարող ալ կերպ բացատրել, եթէ ոչ խորապէս միտումներով: Արձագանքը իր հայտնական յոդուածի ճակատին դրել է մի գերմանական առած. «Ուժ հայն ուսում եմ, նրա երգն եմ երգում» և գոռում է, թէ ես երգում եմ այն մարդկանց երգը, որոնց հացը ուսում եմ: Ես համոզված եմ, որ Յովհաննիսեան ինքն էլ է ամաչում իր սասած խօսքերից: Ուժ երգն եմ երգում ես:

Չը գիտեմ, երբ եմ ես շողորթիկ իրան, Յովհաննիսեանին: Չը լինի թէ այն ժամանակ, երբ «Սամուել» վեպի համար Բաքիին հասանելի հօնօրարի ամբողջ կէտը մարդակուլի կոկորդանց, և ես այս փաստը հաստատեցի ի մինչև անգամ այն պաշտօնակալի մօտ, ուր կանչված էի Տիգրան Նազարեանի դատի առիթով: Այդ ժամանակ ես դեռ «Արձագանքի» քարտուղարն ու աշխատակիցն էի: Երբեք, Յովհաննիսեան կարծում էր, թէ իր շրջանի մարդկանց պէս «ինքնուրաք մտավաճառութեամբ» պարապելի զիտեմ, որ յիշեալ պաշտօնակալի մօտից դուրս գալիս ինձ սպասեաց. «Սպասեցէք, ես ձեզ ցոյց կը տամ, թէ ինչ ասել է Արգար Յովհաննիսեանին հակառակ ցուցմունք տալը»: Յիշում էք, պարոն, այդ օրը: Կամ դուցէ ես Յովհաննիսեանին շողորթիկ եմ այն ժամանակ, երբ «Արձագանքի» աշխատակիցները ներկայութեամբ միշտ պախարակում էին նրա վարմունքը մեր պատկանելի հասարակական գործիչների վերաբերմամբ:

Շատ հաւանական է, որ Յովհաննիսեանը լաւ չէ ուսումնասիրել մարդկային թուլութիւնները: Բայց ես մի քանի տարի շարունակ զբաղողութիւն եմ ունեցել հանդիպել ոչ միայն իսկական շողորթիկներին, այլ և քառթիւն, բանասարկութեան, ուսկեմոլութեան և հոգեվաճառութեան կենդանի տիպարներին երես առ երես:

Երկրամարտ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 27-ին ստացանք հետեւեալ հեռագիրը Երևանից. «Կաթողիկոսը կօնդակով հրամայեց Շուշու հոգևոր դպրոցի հոգաբարձութեան և տեսչին, կանօնադրութեան հիման վրա, շարունակել դպրոցի գործը»:

Ելմիածնից մեր ստացած տեղեկութիւններից երևում է, որ Վեհափառ Կաթողիկոսը, քննելով Շուշու թեմական դպրոցի վարչութեան և Շուշու առաջնորդի մէջ ծագած վէճը՝ արդար է գտել հոգաբարձութիւնը և տեսչին, և հրամայել է դրանց շարունակել իրանց պաշտօնը: Ինչպէս յայտնի է, Այվազեան եպիսկոպոսը չէր ուզում ճանաչել դպրոցի կանօնադրութիւնը, չէր ընդունում հոգաբարձութեան իրաւունքները և անձամբ արձակել էր տեսուչ Սարգսեանին և ուսուցչական խումբը: Անչափ ուրախ եմ, որ Վեհափառ յարգելով դպրոցի՝ երկար տարիներից ի վեր գոյութիւն ունեցող կանօնադրութիւնը, յարգելով ժողովրդի և հոգաբարձութեան իրաւունքները, արդար դուրս բերեց թէ հոգաբարձութիւնը, թէ տեսչին և թէ ուսուցչական խումբը:

Մեզ հաղորդում են Երևանից, որ պրօֆէսոր Անդրէաս Արծրունիին Երևանից ճանապարհ ընկալելով Անի՝ մի քանի հետազոտութիւններ անելու համար:

Մեր թղթակիցը հետեւալ ուշադրութեան արժանի փաստն է հաղորդում մեզ Կաղզուանից. «Ով որ կամենում է փոքր ի շատէ ծանօթանալ համայնիկէ՝ կոչվող հրէշների քաղաքործութեան հետ, թող զայ սահմանի վրա գտնված տեղերը և մի քանի օր մնայ այդտեղ: Այստեղ շարունակ կարելի է լսել ուս սահմանապահ զինուորների թիւրքաց այդ նորակազմ զօրքի մէջ տեղի ունեցած ընդհարումների մասին: Ամսի 17-ին մի քանի հարկի (զինուորների ասելով) հոգուց բաղկացած համադիէ՝ բանակի ջրղբը յարձակումն զօրծեցին ուսաց սահմանապահ զօրքի նախապահիկի (ՍԻՅԵՏԵ) վրա: Սօլդատների և կողակների թիւր, որոնք պահպանում էին պահակը՝ քառասուն էր: Երկու կողմից երկարատե հրացանաձգութիւն եղաւ, որի միջոցին սպանված և վիրաւորված ջրղբի թիւր, ասում են՝ 20-ի հասնում: Ռուսաց կողմից վնասը, համեմատաբար, աննշան է: Վիրաւորված են սահմանապահներին օգնութեան հանող երկու եղի ջրղբի և

154-րդ Գեորգիէի՝ հետեւալ գնդի պողարապօրչիկ Մամեանց, որին երէկ պատգարակով բերին Կաղզուան: Եթէ այդ հրէշները համարձակութիւն ունեն յարձակվել մի հզօր տէրութեան զինուորների վրա, ուրեմն կարելի է եղբակացնել, թէ ինչ վիճակի մէջ կը լինի Թիւրքիայի բայց այլ կեանքը»:

Թէ՛հրանում, մայրաքաղաքի լրագրիների խօսքերով, ներկայ տարվայ վերջը ուսաց արարները մի նոր ցուցահանդէս կը բացվի: Ներկայումս արդէն ուղարկված են Մոսկվայից զանազան արարները ցուցահանդիսի համար:

Մեր մի թղթակիցը Մոսկվայից հետեւալ նկատողութիւնն է ուղարկել տպագրելու համար. «Կարգալով «Մշակի» մէջ տպված այն լուրը, որ Բագուարնակ թուրքը զբամասէր Հաջի-Չէյնալ-Թաղիին արդէն թուրքութիւն է ստացել իր միջոցներով մի այգեգործական դպրոց բանալու Մարզապետ զեղում, մեր միտն ընկաւ հետեւալ կօրի օգը, որ շատ բնորոշ է մեր կեանքի համար: Մտ մի տարի սրանից առաջ յիշեալ թուրքը հարուստ Մոսկվա էր եկել իր բարեկամ մի այլ հայ կրեստի հետ, որը բարեգործի անուն վաստակելու յաւակնութիւն ունի: Թուրքը հարուստը, որը իր առատաձեւութեամբ բաւական մեծ համբաւ է վայելում, Մոսկվայում ապրելով՝ աշխատում էր իրան շատ համեստ պահել, միշտ սուս ու փութ՝ ամենեւին ձայն չէր հանում իր անձի, իր արած կամ անելիք բարի գործի մասին, այն ինչ հայ կրեստը ուր նստում ու վեր էր կենում՝ լեզուի ձայրին հինց այն էր, թէ ինքը ուզում է իր ծննդավայրում գեղատեսեակական մի հոյակապ ուսումնարան բանալ հայ գեղջուկների զաւակների համար, թէ Մոսկվայում խորհուրդներ է տեսնում նմուտ գիւղատեսեակների հետ, թէ այդ բարի գործին յատկացրել է մի շատ խոշոր գումար, թէ... վերջապէս հազար ու մի թէ՛-եր: Սակայն անցաւ մի ամբողջ տարի—և անհայտ կորուցում ենք, որ սուսիկ փութիկ Թաղիինը արդէն այգեգործական դպրոց բանալու թոյլտուութիւն է ստացել և այդ բաղաձայրիւն գործի համար յատկացրել է 300,000 ռուբլի, իսկ ձեռքը հայ բարեգործի գիւղատեսեակական ուսումնարանը, թուրքաց յայտնի առածի անբախտ հետքի նման, դեռ սպասում է, որ «գարունը գայ և ետնջա բանի...» Երբ պէտք է վերջնայ հայեթիւ մէջ բարեգործական գուռնա փչելու հարպիկ սովորութիւնը...»

Երևանեպօլի նահանգի Արէշի գաւառի 12 գիւղերի վրա պետական զանազան հարկերի ապառիկներ են մնացել: Այժմ Ֆրանսիաների միջնորդութիւնը, ինչպէս հաղորդում են «Русск. Вѣд.» լրագրին, հարց է յարուցել ներել նրանց այդ հարկերը: Բացի այդ հարկերը ներելուց, Ֆրանսիաների միջնորդութիւնը մտադրութիւն ունի ներկայ 1894 թ.ի հարկերի վճարումը յետաձգել 5 տարով:

Կրկին մեր ուշադրութիւնն են հրաւիրում այն բանի վրա, որ հոգևոր իշխանութիւնը մինչև այսօր էլ չէ հաստատել Բագուի հայոց դպրոցների հոգաբարձութիւնը, որ ընտրվել է սրանից ամբողջ չորս ամիս առաջ: Երկուսից մէկը. կամ պէտք է հաստատել, որպէս զի հոգաբարձուները հոգան դպրոցի պէտքերը, կամ պէտք է յայտնեն, որ ընտրութիւնը ապօրինի է և չի հաստատվի: Ապա թէ ոչ, ինչ կը նշանակէ ամիսներով ձգձգել, առանց մի վճիռ կայացնելու, առանց մի եղբակացութեան գալու:

ՆՈՒՅՈՒՅ, «Каспий» լրագրին գրում են հետեւեալը. «Օրվայ շարիքը մեր գաւառի սուսնի աղանդին պատկանող մասնաբաժանների մէջ տարածված այն լուրերն են, որ իբր թէ կառավարութիւնը զիտաւորութիւն ունի ստիպել նրանց կամ ուղղափառութիւն ընդունել, կամ գաղթել: Այդ լուրերը այնպիսի յամուռութեամբ էին տարածվում, որ իշխանութիւնը ուշադրութիւն դարձրեց զրանց վրա, և կանչելով տանուտէրերին գաւառի բոլոր գիւղական համայնքների պատուար անձանց հետ միասին, սկսեց համոզել նրանց, որ այդ լուրերը ամենեւին հիւսել չունեն: Իսկ այդ լուրերը տարածող անձանց մասին քննութիւն սկսվեց: Այդ տեսակ ոչինչ հիւս չունեցող լուրեր առաջին անգամ չէ, որ տարածվում են և ազգաբնակչութիւնը միշտ մի անհաւատալի դերա-

նաւատութեամբ հաւատ է ընծայել այդ լուրերին: Օրինակ, 1873 թ.ին մեր մասնաբաժանները, առանց որ և է պատճառի, սկսեցին Թիւրքիա գաղթել, ծախելով իրանց բոլոր կայքերը: Կառավարութիւնը սկսեց քննել այդ գաղթականութեան պատճառները և յայտնվեց, որ նրանց զրգում էին գաղթել մեր գաւառի մի քանի աղբիւրի մասնաբաժաններ, սուտ լուրեր տարածելով. այդ անձանց վրա հակողութիւն նշանակեց, և գաղթականութիւնը դադարեց: 1880 թ.ին Նոխուս և Արէշի գաւառներում լուր տարածվեց, որ իբր թէ կառավարութիւնը զիտաւորութիւն ունի հաւաքել բոլոր այրի կանանց և Ռուսաստան ուղարկել նրանց: Բազմաթիւ կանայք այդ լուրին մի առանձին նշանակութիւն տուին և այդ պատճառով սկսեցին մարդու դնալ, իսկ նրանք, որոնց հետ ոչք չէր կամենում ամուսնանալ, խնդրում էին իրանց ազգականներին, որ նրանք պաշտօնական քերթն կատարեն, որպէս զի իրանք մարդ ունեցող կանայք համարվեն:

ՄՕՍԿՎԱՅԻՅ մեզ գրում են. «Օգոստոսի 21-ին, կիրակի օրը, պատարագից յետոյ, ս. Խաչի եկեղեցում կատարվեց բանաստեղծ Գամառ-Քաթիպայի հոգեհանգիստը. խուռն բազմութեան ներկայութեամբ: Հոգեհանգիստ կատարվեց նաև արտասահմանում վախճանված Յովհաննէս Խատիսեանի համար»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՅԱՍՏԱՆԻՅ

Քանարակեալ, օգոստոսի 16-ին Ծնործի Պարսկաստանում տիրող կարգ ու կանօնի, կաշառակերութիւնը դարձել է մի զօրեղ զէնք ամենքի համար, սկսած վերջին սարկաղից զէնք ամենքի համար, սկսած վերջին սարկաղից մինչև ամենքի պաշտօնեան: Եւ ահա, շնորհիւ այդ կաշառակերութեան է, որ երէկվայ եզեղանայ այսօր խան է կոչվում, ու խանութիւնից էլ բարձր պաշտօններ է երազում, և այդ երազածը կատարելու համար՝ ամեն տեսակ ստոր միջոց գործ է դնում: Ապացոյց՝ այս քանի օրս տեղի ունեցած մի զրգուկի ու քառմենիկ սպանութիւն, որը ահագին յուզում պատճառեց ամբողջ Մազանդարանում:

Մի սարթիփի (նահանգապետ) ծառայ մամուր (պրիստաի օգնական) պաշտօնով ամբողջ երկու տարուց ի վեր աշխատում է եղի զլորել իր տիրոջն ու ինքն ստանձնել նրա իւրաքանչիւր պաշտօնը, այդ միտքը իրագործելու համար ամեն կողմից պաշտօնական մարդկանց կաշառելով: Տեսնելով որ արդէն իր երազը իրականանում է ամենեւին, մտադրում է գնալ Թէ՛հրան մամուր անկառօնապէս, բռնկվելու պատրաստակով: Գնալով Թէ՛հրան, գործ է դնում մօտ 5 հազար թուման զուան, իբրև կաշառք, որ ուզած պաշտօնը ստանայ: Համարեա թէ այժոյս յետ է դառնում իր պաշտօնատեղին, սպանելով Թէ՛հրանից բոլոր առ բոլոր հաստատութեան ֆիրմանին:

Բայց, աւաղ, ի զուր են անցնում մամուրի ջանքերը: Սարթիփն արդէն իմանում է գաղտնիքը կանխօրէն այս և այն կողմն է ընկնում, ցրվում է հազար թումաններ և ի դերն հանում խեղճ մամուրի ամող ծրագրերը: Սակայն մամուրը բոլորովին չէ յուսահատվում:

Եւ որպէս զի վերջ տուած լինի մամուրի կեանքին, մի գեղեցիկ օր սարթիփը բարեկամների մէկի տանը պատուիրում է խնջոյք պատրաստել ու հրախիւլ ի միջի այլոց մամուրին: Միմիայն ինքն բացակայ պէտք է լինի: Այդպէս էլ կատարվում է. խնջոյքի կիսում մանում է սարթիփը՝ չըջապատված թիւնապահներով և ուղղակի պատուիրում է ձեռքակալել ու լանալ նստեցնել մամուրին: Մի գիշեր բանտում պահուց յետոյ, միւս օրը կտոր կտոր են անում նրան ու հողով ծածկում: Սպանութիւնը կատարուց յետոյ լուր են տարածում, որ իբր թէ մամուրը փախել է բանտից, կասկած են գցում սպանվածի եղբայրների վրա ու ձեռքակալել տալիս: Սպանվածի բարեկամները տեսնելով, որ հետեւեալ շատ վատ է լինելու, ուղղակի հեռագրում են Թէ՛հրան Դահին, Բակկարէկին և Բարֆուշը, Հաջի Հօջաթ ուլ-խալամ մեծ կրօնապետին, որպէս զի ազատութիւն արվի բանտարկվածներին: Երկու օրից յետոյ Թէ՛հրանից ու Բակկարէկից հեռագիրներ են ստացվում, հրամայելով ազատել մամուրի բարեկամներին, յայտ-

նելով, որ հակառակ զէպքում, սարթիփը ինքն անձամբ պէտք է պատասխանի: Մի և նոյն ժամանակ գալիս է և Հաջի Հօջաթ ուլ-խալամի զեսպանը, հետեւալ հրահանգով կամ կենդանի մամուրը և կամ նրա դիակը:

Սարթիփը սարսափած, ազատվելու ոչ մի միջոց չէ գտնում, բացի այն, որ փախչում է: Ժողովուրդը աւելի յուզվելով պահանջում է կամ մահ սարթիփին և կամ սպանված մամուրի դիակը: Տեսնելով որ մահը աչքի առաջ է, սարթիփը գիշերով փախչում է Բարֆուշ՝ բնատ նստելու: Հաջի Հօջաթ ուլ-խալամ մեծ մարդաբէի փոխանորդի տանը և այդպիսով ազատ է մնում ժողովրդի բարկութիւնից:

Եւ ով կարող է պահանջել այդ կրօնապետից, մեղաւոր մարդկանց մեղքերի քառութիւն տուող այդ պապից որ և է յանցաւոր: Հաջի Հօջաթ ուլ-խալամի տան պատի տակով անցնողը անգամ պարտաւոր է փոշին լիղել ու դուռը համբուրել: Այդ 90-ամեայ ծերունին այնպիսի ոյժ և ձայն ունի ամբողջ Մազանդարանում, որ Դահին ու իր պալատականների հրամանների հասարակ քամու տեղ են անցնում... Մարգասպանը, աւազակը միանգամայն ազատվում են, եթէ նրա հաւարունի մէջ պատասխան գտնեն...

Հ. Մ.

ԲՈՒՂԱՐԻՍ

Բուլղարիայի նախկին առաջին մինիստր Ստամբուլովի ընկերուց յետոյ, թէ ուսու և թէ արտասահմանեան մամուրի մէջ այն գազափարը սկսեց տիրապետել, թէ սրանից յետոյ աւելի բնական յարաբերութիւններ կը հաստատվեն Ռուսաստանի և Բուլղարիայի մէջ, քանի որ Ռուսաստանի երդուեալ թշնամի Ստամբուլով ստիպված եղաւ հեռանալ քաղաքական սպառկից:

Այդ հարցի մասին խօսելով Վիեննայի «Polit. Corresp.» լրագրի Սօֆիայի թղթակիցը աշխատում է ապացուցանել Սօֆիայից դրած իր վերջին նամակում, թէ այժմեան բողաքական կառավարութիւնը ամենեւին զիտաւորութիւն չունի խրախուսել ուս մամուրի յոյսերը՝ ուսաց ազդեցութիւնը վերականգնելու Բուլղարիայում: Ամբողջ տարբերութիւնը Ստամբուլովի և Սօֆիովի քաղաքականութեան մէջ, վերջինից թղթակցի կարծիքով, այն է, որ Ստամբուլով հալածում էր ուսաց կողմնակիցներին, իսկ Սօֆիով նայում է նրանց վրա, որպէս ամեն մի ուրիշ կուսակցութեան վրա, և գործունէութեան ազատ սպարեղ է տալիս նրանց:

Սակայն այդ ուղղութեան մէջ Սօֆիովի միջնորդութիւնը չէ կամենում անցնել որոշեալ սահմաններից: Ապացոյց դրան այն, որ չը թող տրվեց Յանկովին Բուլղարիա վերադառնալ: Միայն թիւթեամբ մարդիկ կարող են երևակայել, որ իբր Սօֆիով ուսաստը մեծամասնութիւն է նախապատրաստում ազգային ժողովի համար: Նա միայն աշխատում է վերականգնել պահպանողական կուսակցութիւնը, որի վրա և զիտաւորութիւն ունի յենվել: Առհասարակ, ենթադրում են, որ ազգային ժողովում ստուար մեծամասնութիւն չի կազմվի, այլ միայն առանձին խմբեր կը լինեն, որոնք կը պաշտպանեն այժմեան կառավարութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լօտարինգիայում երկիրը գերմանացիներ գործը առհասարակ աջողութիւն չունի: Նորբա գտել են, որ Լօտարինգիայում ծախվող բոլոր աղթագրքերում մի այսպիսի նախադասութիւն կայ՝ «Երբ քո Ֆրանսիան»: Գերմանական լրագիրները պահանջում են, որ խիստ միջոցներ գործ դնվեն տեղական հոգեբանութեան դէմ, որը ոչ միայն տարածում է այսպիսի գրքեր, այլ և եկեղեցու բեմից ազգասիրական հրաւերներ է կարգում:

ԻՍԱՆ ԼՈՒՐԵՐ

Սե Ժովի ժովեղբայր զլխաւոր քաղաքներում այժմ գանազան փորձեր են անում թէ հին և թէ նոր ժամանակ հարած այն գործիչները վրա, որոնք պէտք է ծառայեն իբրև իրկող միջոցներ ալկոհոլութիւնների և նաւարկութիւնների ժամանակ: Բաւական աշող պէտք է համարել

«ლიტერატურა»-ს, որსაც მისთვის ღირსეულად...

«ლიტერატურა»-ს, որსაც მისთვის ღირსეულად...

«ლიტერატურა»-ს ზედაპირის

«ლიტერატურა»-ს ზედაპირის...

Table with financial data: U. მისთვის... 100000, 200000, etc.

«ლიტერატურა»-ს ზედაპირის...

«ლიტერატურა»-ს ზედაპირის...

«ლიტერატურა»-ს ზედაპირის...

«ლიტერატურა»-ს ზედაპირის...

«ლიტერატურა»-ს ზედაპირის

«ლიტერატურა»-ს ზედაპირის...

«ლიტერატურა»-ს ზედაპირის...

Advertisement for 'ლიტერატურა' (Literature) with details on subscriptions and prices.

Advertisement for 'ლიტერატურა' (Literature) with details on subscriptions and prices.

Advertisement for 'ლიტერატურა' (Literature) with details on subscriptions and prices.

Advertisement for 'ლიტერატურა' (Literature) with details on subscriptions and prices.

Advertisement for 'ლიტერატურა' (Literature) with details on subscriptions and prices.

Advertisement for 'ლიტერატურა' (Literature) with details on subscriptions and prices.